

Երկու մօտեցում, երկու հոգեբանություն

Նույն՝ Լոս Անջելես քաղաքում լույս ածող երկու պաշտոնաբերքեր, առաջինը՝ Ռաժ-կավար ազատական կուսակցության, երկրորդը՝ Հայ հեղափոխական դաշնակցության, նույն հարցի նկատմամբ նույն ախտորոշումը անելով նանդերձ դրսևտրում են երկու տար-րեր մտանցում, երկու տարրեր հոգեբանություն: Առաջինը ախտաճանաչումը կայացնում է ցավով, երկրորդը՝ պատճառած մտահոգությամբ, իսկ երկրորդը՝ ցավեցնելու, մտահո-գելու գիտավորությամբ: Մինչ առաջինը հարց է տալիս, երկրորդը փորձում է դաս տալ:

Նորժ

Հայրենի իշխանությունը դժուարին երկրնսրանի առջեւ

Սովետական Միության ներքին գործոց նախարար, քաղաքական երկիրներում մէջ ՊԱԿ-ի նախկին պաշտօնատար Պուզոն, անցեալ շաբթուան մէջ կատարեց խոստովանութիւն մը, որ ամբողջ Լուսնամբ կը պարզաբանէր կեդրոնական իշխանութիւններու վարած քաղաքականութիւնը Հայաստանի նկատ-մամբ: Աղբրեջանի ռազմական գործողու-թիւնները հարեւան Հայաստանի դէմ ո-րակելով «ինքնապաշտպանութիւն», իրա-ական արդարացում մըն ալ տուաւ «իւրաքանչիւր ինքնիշխան հանրապետու-թեան տեղական մարմինների իրաւասու-թեան մէջ» տարագումով: Ուրեմն, Ա-ղբրեջանի «ինքնիշխան» հանրապետութիւնը կը դառնար սանձազերծ, «ոչ ինքնիշխան» Հայաստանի Հանրապետութեան դէմ պատ-ժիչ գործողութիւններ ձեռնարկելու՝ բանա-կին եւ ներքին գործոց նախարարութեան յատուկ ջոկատներու մեղսակցութեամբ:

Իսկ, Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանական պատուիրակութեան ան-դամ Գաիթ Վարդանեան, որ նոր վե-րադարձած էր Մոսկուայէն, Օպերայի հրա-պարակին վրայ կայացած հանրահաւաքին, առկա եւս պարզաբանեց Կրեմլի դե-կավարներու դիրքը: «Անոնք մեզի ըսին, թէ փախչելու տեղ չունինք եւ պէտք է ենթարկուինք Կեդրանին»:

Անկին: Հայաստանի խորհրդարանի ար-տակարգ լիազօմար նիստին, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան կը տեղեկացնէր, թէ ՊԱԿ-ի պե՛ս Կրիչկովը անուղղակի հաս-կցուցած էր «կոճակ»ը սեղծողին ինք-նութիւնը՝ յանձին նախագահ Գորբաչովին:

Այս բոլորը դնելով մէկ յայտարարի տակ, ամենաւն լուսաւորեալն էր երկուսն էլ կուգայ Կեդրոնի դիտարկութիւնը՝ նեղ կացութեան մատնելու Հայաստանի ներկայ կառավարութիւնը, պարտադրելու, որ ամէն գնով ստորագրէ միութենական նոր պայ-մանագիրը եւ հրաժարի անկախութեան ուղիէն:

Այժմ դադրած են զինուորական մեծա-ծաւալ գործողութիւնները: Աղբրեջանական եւ կեդրոնական իշխանութիւններն անցած են գործողութեան ամէնէն վտանգաւոր փու-լին:

Գործողութեան այս վերջին (թերեւս վերջնաբեր) փուլին նպատակն է լուծարի ենթարկել Լեւոնային Արցախի գոյավիճակը, արմատական լուծում մը տալ... հայութեան պարպելով ամբողջ շրջանը: Փետրուար

1988-ին սկսած շարժումին արդիւնքը, կե-դրոնական իշխանութեան վարած դաւադիր քաղաքականութեամբ, պիտի ըլլայ կորուս-տը Լեւոնային Արցախին եւ Հայաստանի ամբողջական մեկուսացումը՝ քաղաքական եւ տնտեսական առումով:

Հայաստանը կը պատժուի իր վարած ինքնիշխան քաղաքականութեան համար: Կեդրոնական իշխանութիւնները տրամադիր չեն սովետական ներկայ կառոյցէն անկախ ոչ մէկ անկախ միատրի գոյութիւնը ճանչ-նալ: Իսկ Հայաստանի համար անկախու-թեան այժմու գործընթացին հետապնդումը վերածուած է պարադոքսի մը: Հետապնդել գայն կը նշանակէ առաւել եւս պատժուիլ: Հրաժարիլ անկէ, կը նշանակէ ենթարկուիլ վարչահրամայական նախկին մերժելի կառոյցին:

Իրերու այս դժուարին կացութեան մէջ է որ յաճախ Հայաստանի մէջ կը լսուին ծայներ, հրաժարելու՝ Արցախը Հայաստա-նին կցելու թուղթի վրայ մնացած ո-րոշումէն, փրկելու համար մնացորդը: Այս կացութեան դիմաց է, որ կ'առաջարկուի պահել ստատուս-քուտն, հաշուի առնելով Հայաստանի գործելու սահմանափակ կա-րելիութիւնները:

Սակայն դժբախտութիւնը այն է, որ տրամաբանական եւ յաճախ քննարկութեան եւ վերլուծման կարիք ունեցող եւ երբեմն ալ նոր կացութիւններու դիմաց նոր ռազ-մավարութիւն մը մշակելու առաջարկները կը մեկնաբանուին «դաւաճանութիւն», ա-ռանց նկատի առնելու առնակատման կոր-ծանարար ուղին: Քաղաքականութեան եւ դիւանագիտութեան մէջ պէտք է զիտնալ ժամանակատեղի նահանգներն արձանագտել մեծ շահերու հաշուոյն, բան մը, որ չեն ուզեր հասկնալ տաք գլուխները:

Այսօր Հայաստանը պէտք ունի սառն դիւանագիտութեան, պետութեան կողքին ուժերու համախմբման եւ մէկտեղման, որ-պէսզի քաղաքական այս փոթորիկին մէջ կարելի ըլլայ կանխել եղածը կորսնցնելու վտանգը:

Եւ ասիկա պէտք է դիտել ազգային շա-հերու դիտանկիւնէն, այլ երբեք գայն նկատել «դաւաճանութիւն»: Դաւաճանու-թիւնը այս օրերուն կանակէն հարուածելն է հայրենի իշխանութիւնը...:

ՅՍԿՈՐ ԳՕՂՈՍԵՍԸ
«Նոր օր»
22 մայիս 1991